# ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ ՀԱՅՐԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԱՐԻՈՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱՆՈՒԿՅԱՆ Հ. Դ.

Հայ առաքելական սուրբ եկեղեցին IV դ. երկրորդ կեսին ապրում էր իրադարձություններով լի շրջան: Ներսես Մեծ Ամենայն հայոց կաթողիկոսը 354 թ. Աշտիշատում գումարում է մի ժողով, որի միջոցով փորձում է կանոնավորել հոգևոր կյանքը հայոց երկրում: Պապ թագավորի գահակալությամբ (370 թ.) և Զիրավի ճակատամարտով (371 թ.) ամրապընդվում է հայոց պետականությունը, սակայն Ներսես Մեծի մահով (373 թ.) և Պապ թագավորի դավադիր սպանությամբ (374 թ.) կրկին անկայուն վիճակ է ստեղծվում երկրի ներսում: Այս իրադարձություններին զուգընթաց՝ հայոց լեռնաշխարհին հարևան Կապադովկիա երկրամասում մեծ թափ է ստանում արիոսական վարդապետությունը, և Կապադովկիան դառնում է արիոսականության կենտրոններից մեկը[1]: Ոչ ուղղափառ այս վարդապետության կողմնակիցները վայելում էին իրենց համակիր Բյուզանդիայի Վաղես կայսեր բարեհաճությունը, որն ավելի է զորացնում արիոսական քարոզչությունը: Այն տարածվում է նաև Փոքր Հայքում, որտեղ իշխում էր արիոսականների կողմն անցած՝ Սեբաստիայի հայոց եպիսկոպոս Եվստաթիոսը[2]: Կապադովկիայում և Փոքր Հայքում ծավալվող արիոսականությունը սպառնալիք է ստեղծում Մեծ Հայքի համար: Այն կարող էր դյուրին ներթափանցել ու ծավալվել Մեծ Հայքում, քանի որ հայ հոգևոր քաղաքական դաշտում անկայուն վիճակ էր տիրում: Ծավալվող հոգևոր-գաղափարական այդ պայքարում Կապադովկիայում ուղղափառության ջահակիրներն էին երեք հանրաճանաչ կապադովկյան հոգևոր հայրեր՝ Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին և Գրիգոր Նյուսացին: Նրանք բարեկամական ու ջերմ հարաբերություններ ունեին հայ եկեղեցու հոգևոր հայրերի հետ:

Անշուշտ, այս պայքարն իր հետևանքներն էր թողնում նաև Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների վրա, հատկապես երբ դրանց խառնվում էին Բյուզանդիայի կայսրերը: Կապադովկյան հայրերն ասպարեզ իջան այնպիսի ժամանակահատվածում, երբ արդեն գումարվել էր առաջին տիեզերաժողովը (325 թ.)[3], որտեղ քննարկվել էր Քրիստոսի աստվածության խնդիրը, և արիոսական աստվածաբանությունը մատնվել էր անհաջողության: Սակայն արիոսականության տարածումը դեռ կասեցված չէր, և նույնիսկ այն առավելություն էր ստանում որոշ եկեղեցական թեմերում, մանավանդ որ Կոստանդնուպոլսի կայսրերի մեջ հայտնվում էին արիոսական վարդապետությանը կարևորություն տվող

---

[1] Տե՛ս *Святитель* **Григорий Богослов**, *Собрание творений, т. 1, Свято-Троицкая Сергиева Лавра, 1994, с. 1.*

[2] Տե՛ս **Շիրինյան Մ.,** Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը, Ե., 2005, էջ 71-72:

[3] Տե՛ս **Գանձասար,** հ. Ա, Ե., 1992, էջ 111-116:

անձինք: Թեև ուղղափառ աստվածաբանությունը այդ պատճառով պաշտոնապես տարել էր իր հաղթանակը առաջին տիեզերաժողովում, սակայն ժամանակ առ ժամանակ ստիպված էր պայքարել քրիստոնեական վարդապետության ուղղափառ դավանության պահպանման համար:

Հայտնի է, որ առաջին տիեզերաժողովին մասնակցում էր Սբ. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը[4], որը Հայաստան է բերում հոգևոր հայրերի դավանական որոշումը Քրիստոսի աստվածության վերաբերյալ: Հայ եկեղեցին դրանով իր հավանությունն է արտահայտում Նիկիայի տիեզերաժողովում ընդունված կանոններին: Խնդիրը ծագել էր Ալեքսանդրիայի հոգևորական Արիոսի քարոզչության պատճառով, որը, հենվելով սոսկ փիլիսոփայական և տրամաբանական ռացիոնալ մտածելակերպի վրա, քարոզում էր, թե Քրիստոս Աստված չէ, այլ արարած՝ արարչագործությունն իրագործելու համար: Այս տեսությունը արագորեն դուրս եկավ Եգիպտոսի սահմաններից՝ լինելով մատչելի և ըմբռնելի շատերի համար. այն սպառնալիք դարձավ ընդհանրական եկեղեցու միասնության և ուղղափառ դավանության համար: Աստվածաբանական այդ վեճը վտանգի էր ենթարկում նաև բյուզանդական կայսրության միասնականությունը: Կոստանդին կայսրը (337-361 թթ.) մտահոգված էր քրիստոնեական աշխարհում տեղի ունեցած այդ առճակատումներից, և նրա անմիջական նախաձեռնությամբ էլ գումարվում է առաջին տիեզերաժողովը Նիկիայում, որտեղ Արիոսն արժանանում է դատապարտության: Հատկանշական է, որ արիոսյան վարդապետության մեջ կային այնպիսի տարրեր, որոնց կայսրերը կարող էին օգտագործել իրենց իշխանությունն ամրապնդելու համար: Ինչպես նշեցինք, ըստ այդ վարդապետության, աշխարհ եկած Փրկիչը արարած էր՝ ստեղծված ժամանակներից և դարերից առաջ[5]: Հենվելով այս հանգամանքի վրա՝ կայսրերը կարող էին իրենց նույնպես համարել աշխարհի փրկիչ, Աստծո որդի, որը հնարավորություն ու կարողություն ուներ փոխելու կյանքի ընթացքը, բարելավելու հասարակության կենսակերպը և այլն: Այսինքն՝ արիոսական վարդապետությունը պարարտ հող էր՝ կառուցելու աստվածապետական կայսրություն, որտեղ լավագույնս կիրառվելու էր կայսեր պաշտամունքը: Այդ իսկ պատճառով որոշ կայսրեր որդեգրում էին արիոսական դավանությունը: Նրանցից մեկ էլ հենց Վաղեսն էր, որի գահակալման շրջանը (364-378) համընկնում էր կապադովկյան հայրերի գործունեության հետ, որոնք արժանի պայքար ծավալեցին Վաղես կայսեր վարած արիոսական քաղաքականության դեմ: Այս առումով նշանակալի է, որ կապադովկյան հայրերը հայտնի էին առավելապես երրորդաբանական ու քրիստոսաբանական աստվածաբանությամբ[6], որ անհրաժեշտ հրամայականն էր տվյալ ժամանակաշրջանի դավանական խնդիրները լուսաբանելու, ուղղափառության հիմքերը ամրապնդելու և արիոսականների քաղաքական ու հոգևոր հարձակումների դեմ պայքարելու համար: Հայ մատենագիրներից Անանիա Շիրակացին իր «Պատմութիւն Անանիայի Շիրակայնւոյ համարողի» եր-

[4] Նույն տեղում, էջ 25:
[5] Նույն տեղում, էջ 24:
[6] Տե՛ս *ARANISM, MACEDONIANISM, APOLLINARISM AND THE CAPPADOCIAN FATHERS:* www.mariannedorman.homestead.com-47k

կում անդրադառնում է Վաղես կայսեր գործունեությանը, որը խոչընդոտներ էր ստեղծում ընդհանրական եկեղեցու ուղղափառ դավանության համար[7]: Հայ առաքելական սուրբ եկեղեցին ևս զերծ չէր այդ հարձակումներից, և հայ եկեղեցու դավանական երկերում նկատելիորեն օգտագործվում էին կապադովկյան հայրերի աստվածաբանական մտքերը՝ հիմնականում ընդդեմ արիոսականության և Ապողինարի քրիստոսաբանական տեսության:

Հատկանշական է նաև Կ. Պոլսի երկրորդ տիեզերաժողովը (381 թ.), որտեղ Գրիգոր Նազիանզացին ազդեցիկ դերակատարություն է ունենում և պաշտպանում Սուրբ Հոգու աստվածությունը:

Եթե Կ. Պոլսի արիոսական կայսրերը կարողանային Կապադովկիայում վերջնականապես հաստատել արիոսականությունը, ապա այն մեծ սպառնալիք կդառնար Հայկական լեռնաշխարհի հոգևոր և քաղաքական կյանքում, մանավանդ որ 387 թ. Մեծ Հայքը բաժանվել էր Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև, և Մեծ Հայքի արևմտյան հատվածը բյուզանդական գերիշխանության ներքո էր: Այսպիսով, կապադովկյան հայրերի ակտիվ հոգևոր գործունեության շնորհիվ արիոսականությունը չկարողացավ Կապադովկիայից մեծ ուժերով անցում կատարել դեպի Հայկական լեռնաշխարհ: Հետաքրքրական է Սեբեոսի վկայությունը կապադովկյան հայրերի և հայ եկեղեցականների ջերմ հարաբերությունների մասին. «Սուրբ և ճշմարիտ կաթողիկոսն մեր Գրիգորիոս ի Կեսարիայ Կապադովկացւոց սնեալ և ուսեալ վարդապետեաց մեզ, յոր հիմնացեալ անշարժ կամք մինչև ցայժմ, և ի վերայ նորին ունիմք վարդապետս զսուրբ ճըշմարտապատումս... Կիւրեղ Ալեքսանդրացի եպիսկոպոս, և Բարսեղ Կեսարու եպիսկոպոս, և Գրիգոր Նազիազու և Գրիգորն Նէոկեսարու սքանչելագործ և Գրիգոր Նիւսացի, եղբայր Բարսղի և այլ անթիւ հովիւք ուղղափառութեան՝ համաբարբառք նոցին, որոց պատմութիւնքն յայտնի են»[8]: Ինչպես նկատել է Կիմ Մուրադյանը, «Սույն հատվածն ունի երկու ուշագրավ կետ. առաջինն այն է, որ հեղինակը հիշատակում է հայոց եկեղեցու, այսպես կոչված, ուղղափառությունն՝ սկսած Գր. Լուսավորչի՝ կապադովկյան Կեսարիայում ուսանելու-դաստիարակվելու պատմությունից, որի բուն աղբյուրն, անշուշտ, Ագաթանգեղոսի «Պատմութիւն»-ն է: Մյուս նկատելի կողմն այն է, որ պատմիչը նորովի է արձանագրում այն հայտնի իրողությունը, թե հայոց եկեղեցու դավանանքի առումով «հիմնացեալ անշարժ» լինելու գաղտնիքը եկեղեցու նշանավոր հայրերի, այդ թվում՝ «երեք մեծ կապադովկացիների» ճշմարտապատում վարդապետությանը հետևելու մեջ է»[9]:

Այսպիսով, ակնհայտ է հայ եկեղեցու և կապադովկյան հայրերի անմիջական կապը: Սակայն օտարազգի որոշ աստվածաբաններ, նկատի ունենալով այդ հանգամանքը, կարծիք են հայտնել, թե հայ եկեղեցին ենթակա

---

[7] Տե՛ս **Մուրադյան Կ.,** Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Ե., 1983, էջ 33:
[8] **Մուրադյան Կ.,** Գր. Նյուսացին հայ մատենագրության մեջ, Ե., 1993, էջ 34:
[9] Նույն տեղում:

է եղել կապադովկյան եկեղեցուն՝ հիմնվելով այն իրողության վրա, որ Գր. Լուսավորիչը գնացել է Կեսարիա՝ ձեռնադրություն ստանալու համար: Եվ Գրիգորից մինչև Ներսես Մեծն ընկած ժամանակահատվածը հայ եկեղեցու հովվապետերը եղել են կապադովկյան եկեղեցու ենթակայության ներքո[10]: Սակայն փաստերի հստակեցումը ցույց է տալիս, որ հայ եկեղեցին կախման մեջ չի եղել կապադովկյան եկեղեցուց: Միայն այն իրողությունը, որ Գրիգոր Լուսավորչի հաջորդները՝ Արիստակեսը, ապա Վրթանեսը, ձեռնադրվել են Հայաստանում առանց կապադովկյան եկեղեցու միջամտության և ներգործության, ցույց է տալիս, որ հայ եկեղեցին որևէ վարչական կախում չի ունեցել Կեսարիայի միտրոպոլիտից[11]: Հատկանշական է նաև, որ Կապադովկիայի բնակչության մեծ մասը հայեր էին[12]: Եվ չի բացառվում, որ Գրիգորին ձեռնադրող Ղևոնդիոս եպիսկոպոսը կարող էր ազգությամբ հայ լինել, քանզի որևէ տեղեկություն չկա նրա հույն լինելու վերաբերյալ[13]:

Կարելի է հստակ ասել, որ հայ եկեղեցին նաև դավանաբանական կախվածության մեջ չի եղել կապադովկյան աստվածաբանությունից: Պարզապես հայ հոգևոր գործիչները, ինչպես ընդհանրական եկեղեցական մյուս գործիչները, իրենց երկերում օգտագործել են կապադովկյան հայրերի դավանաբանական աշխատությունները: Հայ մատենագիրները, վկայություններ բերելով կապադովկյան հայրերի երկերից, ցույց են տվել հայ եկեղեցու դիրքորոշումը ընդդեմ արիոսականության, թեև հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի զարգացման հիմնայուներից է նաև կապադովկյան հայրերի քրիստոսաբանությունը[14]:

Հիշատակելի է այն փաստը, որ երբ Ղազար Փարպեցին մեղադրվում է աղանդավորության մեջ. նա իրեն արդարացնելու համար նշում է, որ ուսանել է նաև կապադովկյան հայրերի աստվածաբանական հայացքները, որոնք իր համար առաջնորդող ուղղափառ ջահ են՝ այս կերպ ցույց տալով, թե ինչքան ընդունելի են կապադովկյան հայրերի դավանաբանական հայացքները հայ եկեղեցու համար:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհին հարևան երկրամասում ծնված կապադովկացի հոգևոր հայրերն անմիջական կապ են ունեցել հայ հոգե-վոր աշխարհի հետ, նպաստել համաքրիստոնեական աշխարհի վարդապետական ուղղափառության ամրապնդմանը: Նրանց շնորհիվ արիոսական վարդապետությունը չկարողացավ համակայսերական նշանակություն ձեռք բերել Բյուզանդիայում, և արիոսական քաղաքականության պար-

---

[10] Տե՛ս **Դամասկինոս վրդ. Պապանդրեու** (միտրոպոլիտ Ծվեյցարիայի), Հայ եկեղեցու հիմնադրումը և կազմավորումը մինչև Դ տիեզերական ժողովը, Սբ. Էջմիածին, 1997, էջ 101-120:

[11] **Եզնիկ քհն. Պետրոսյան,** Հայ եկեղեցու պատմություն (Հայաստանի եկեղեցու հարաբերությունը Կեսարիայի միտրոպոլիտության հետ, մաս Ա, Հաղբատավանք, 1990, էջ 33-35), **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, էջ 94-95:

[12] Տե՛ս **Բարթիկյան Հ.,** Հայ-բյուզանդական հետազոտություններ, Ե., 2002, էջ 752:

[13] Նույն տեղում, էջ 752:

[14] Տե՛ս **Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյան**, Հայ եկեղեցու քրիստոսաբանությունը, Սբ. Էջմիածին, 1995, էջ 8, 27:

տաղրումը բացառվեց 387 թ. հետո Բյուզանդիայի գերիշխանության ներքո գտնվող հայկական երկրամասում:

## ЦЕРКОВНЫЕ ОТЦЫ КАППАДОКИИ ПРОТИВ АРИАНСТВА И ПОЗИЦИЯ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

МАНУКЯН О. Д.

**Резюме**

Установление официальной догматики христианской церкви выдвинуло перед христианскими богословами новые задачи. Необходимо было доказать верность принятых Соборами догматов и разъяснить их. Первая систематизация христианского вероучения была предпринята в IV-начале V вв. Значительную роль сыграли в этом христианские мыслители родом из Каппадокии – Василий Великий, Григорий Богослов и Григорий Нисский, активно участвовавшие в церковно-политической борьбе. Им удалось пресечь распространение арианства и добиться победы православия.